

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ա.

Անցեալ տարի, Հոկտեմբերի 14-ին, Մայր Աթոռում տեղի ունեցաւ մի այնպիսի տխուր անցք, որ Հաւասարապէս ցաւ պատճառեց ամենքին. այդ օրը Ս. Էջմիածնի պարսպից ոստիկանութեան Հսկողութեան ներքոյ դուրս տարուեցան դէպի աքսորավայր Սինօդի երկու անդամներ, Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսներ:

Ընթերցողները իւր ժամանակին կարգացին լրագրներում, որ այդ եպիսկոպոսների բոլոր իրանց պաշտօններից արձակուելու և աքսորուելու պատճառ են տուել Սինօդում կատարուած օրէնսդէմ գործողութիւնները, որոնց դէմ բողոքել է Սինօդի պրօկուրօրը: Բնական էր, ի հարկէ, սպասել, որ Հայ ժողովուրդը վերին աստիճանի հետաքրքրութիւնով և լարուած ուշադրութիւնով ցանկանար և հետևէր ճիշտ տեղեկութիւն և բացատրութիւն ունենալ այն օրէնսդէմ գործողութիւնների մասին, որոնք կարող էին այսպիսի մի ծանր պատժի պատճառ լինել: Մեզ Հասած տեղեկութիւններից իմանում էինք, որ մի քանի շաբաթ շարունակ ժողովրդին զբաղեցնող, խօսակցութեան և հարցասիրութեան նիւթ տուող խնդիրն այդ էր:

Աւելի հետաքրքրութիւն և յուզումն յառաջ բերեց այդ անցքը մեր օտարերկրեայ Հայ եղբայրների մէջ թէ այն պատճառով, որ ամենեւին ճշգրիտ տեղեկութիւն չունէին Էջմիածնում կատարուած վերջին ամիսների անցքերից, և թէ այն պատճառով մանաւանդ, որ անբարեխիղճ անձինք օգուտ քաղելով դէպքի անսովոր հանգամանքներից՝ կամեցան այս կամ այն եկեղեցականի անունն

ու պատիւը նսեմացնել ժողովրդի աչքում՝ տարածելով, թէ այդ երկու եպիսկոպոսները զոհ գնացին մատնութեան: Կ. Պօլսի «Արևելք» լրագիրն էլ, որ իբրև որոշ անձինքների բերան անցեալ Ապրիլից սկսած հիւրընկալել է միշտ իւր էջերում ամեն տեսակ զրպարտութիւններ և շինծու լուրեր, այս անգամ էլ սովորական հաճութեամբ շտապեց հրատարակել ոչ միայն այդ մտքով կազմած զրպարտական նամակներ, որոնք անուանուած էին երբեմն՝ նամակ Երևանից, երբեմն — Վաղարշապատից, երբեմն՝ — Սալմաստից, և այլն, այլ և մի երկու խմբագրական յօդուածներում նոյնպիսի ակնարկներ արեց:

Թէպէտև այդ բոլորը մի շատ կարճ ժամանակի համար էր, և այժմ, ինչպէս ամեն տեղերից հասած հաւատարիմ տեղեկութիւնները ցոյց են տալիս, շատ բան պարզուած է հայ ժողովրդի համար ¹⁾, շատ անտեղի կասկածներ անհետացած են, այսուամենայնիւ «Արարատ»-ը պարտք է համարում ինդիրն առաւել պարզաբանել ներկայ բացատրութիւնով:

Նախքան յիշեալ եպիսկոպոսների իբրև Սինօղի անդամ գործած ապօրինութիւնների մասին խօսելը, կարևոր է մի համառօտ ակնարկ փել Ս. Էջմիածնի այն դրութեան վերայ, որի անխուսելի հետեւանքն են այդ գործողութիւնները: Ի հարկէ, խոստովանում ենք, այդպիսի մի ակնարկ, որքան էլ և զգուշութեամբ կազմած լինի, դարձեալ ունենալու է որքան և իցէ անյարմարութիւն. բայց այն անհրաժեշտ հարկը, որ ստիպում է մեզ խօսել, ստիպում է և անյարմարութիւնը նկատելով հանդերձ խօսել:

1) Աւելորդ է ենք համարում յառաջ բերել այստեղ մի անկողմնակալ անձի նամակից հետեւեալ տողերը հրապարակում տարածուած զրպարտութիւնների և զրպարտիչների մասին. «Անմիտները իրանց կուրութեան մէջ չէին կարող խտրել բառերը, կշռել նոցա նշանակութիւնը: Մատնել կարելի է մի ծածուկ բան, գաղտնութեան մէջ գործող մի անձին. բայց ի՞նչ ասել է մատնել մէկին, որ կտուրի վրայ է գործում օրինազանցութիւնը, քարոզում է նոյնը հրապարակաւ և եղջիւր է ածում գոռալով իւր իշխանաւորի դէմ»:

Գէորգ Գ. Կաթողիկոսի մահից յետոյ ամբողջ Հայ ազգը փափագ յայտնեց կաթողիկոսական աթոռի վերայ տեսնել Ներսէս Պատրիարքին. սորա ընտրութիւնից և մահից յետոյ՝ այդ փափագը արտայայտուեց Խրիմեանի և Մելքիսեդեկ եպիսկոպոսի մասին. երկրորդ կաթողիկոսական ընտրութեան ժամանակ առաջին ընտրելի եղաւ Մելքիսեդեկ եպիսկոպոս և երկրորդը՝ Տ. Տ. Մակար, որ և Հաստատուեց Կաթողիկոս:

Մինչդեռ և մամուլի և առանձին գրքոյկների մէջ յառաջ էին բերում կաթողիկոսացու եկեղեցականներին վայել արժանիքներն, որոնց և տեսնում էին յիշեալ եկեղեցականներին մէջ, «Մեղու Հաստանի» լրագիրը միշտ այն միտքն էր քարոզում, թէ կաթողիկոսը պիտի ընտրուի Ռուսաստանի եպիսկոպոսներից. «Փորձը մեզ ցոյց է տալիս, ասուած է այդ լրագրի 1883 թուի 107 №-ում, որ մի ժողովուրդ կառավարելու համար պէտք է նրան ճանաչել. պէտք է նրա սովորութիւններին, ձգտումներին, գաղափարներին, մինչև իսկ նրա նշանաւոր անդամներին ծանօթ լինել: Ի վերջոյ այդ ժողովրդի բնական երկրի կարգերին և օրէնքներին հմուտ լինել, կառավարութեան ուղղութեան և նպատակներին տեղեակ լինել...: Մատթէոս և Գէորգ կաթողիկոսները որքան էլ ունեցան բարձր զգացմունք, յիշատակ թողնելու բարի ցանկութիւն, բայց և այնպէս ժողովուրդը նրանց օրով անտարբերութեան մէջ ընկաւ դէպի եկեղեցին, որ վերաբերումէնք ոչ թէ հանգուցեալ Հայրապետների անհոգութեան, այլ նրանց անծանօթ լինելուն այն ժողովրդեան և եկեղեցականութեան վիճակին և պիտոյից, որոնց հոգալու կոչված էին ի պաշտօնէ: Մենք չենք կարող երեւակայել Կ. Պօլսի պատրիարք մի ռուսաստանցի կամ պարսկաստանցի եպիսկոպոսի, որ իւր բոլոր ժամանակն անցուցել է այդ երկրներից մէկում, այնտեղ կրթվել ու դաստիարակվել է, այդ երկիրների օրինաց հոգւով...: Մենք կը խնդրեմք (Պօլսի Ազգ. Ժողովից) որոնել այնպիսի մի կաթողիկոսացու, որ յարմարութիւն ունենար հոգալու գլխաւորապէս ռուսահայոցս մտաւոր և բարոյական պիտոյքն և ռուսահայոց եկեղեցեաց և եկեղեցականաց կառավարելու ընդունակ լինէր, իբրև տեղեակ սրանց հանգամանաց»:

Յայտնի է, որ վերջին երկու կաթողիկոսական ընտրութիւններին տաճկահայերը պատգամաւորներ չուղարկեցին և հետեւաբար ուղղակի մասնակցել չը կարողացան. այլ ուղարկեցին ընտրելիների եռանուն ցանկ և իրանց կողմից պատուիրակներ նշանակեցին ժամանակակից Տեղապահներին: Երկու ցանկի մէջ ևս իբրեւ արդիւնք Կ. Պօլսի Ազգ. Ժողովի քուէարկութեան դրուած էին երեք ընտրելիների անուններ Տաճկաստանի Հայ եպիսկոպոսներից և ոչ մինը ռուսաստանցիներից. բայց երկու անգամն էլ Էջմիածնում դումարուած ընտրողական ժողովը յարգեց այդ ցանկերը, Թուրքիոյ Հայոց հետ բարոյական միութիւնը պահպանելու համար: Այդպիսի միութեան պահպանութեան նախանձախնդրութիւնը թերի երևեցաւ միայն մի քանի եկեղեցականների մէջ, որոնց պարագլուխը և բերան կարող էր համարուել Սրբազան Սուրբիաս եպիսկոպոս Պարգեանց, որ 1884-ին նկատելով Թուրքիոյ Հայոց ցանկն իբրեւ ապօրինի, այն կարծիքն էր յայտնում, որ պէտք է մերժել նորան. և եթէ Թուրքիոյ Հայերը դորանով կը բաժանուին մեզանից, թող բաժանուեն. իսկ 1885-ի ընտրութեանը մինչև անգամ եկեղեցու մէջ, երբ ընտրողական ժողովն արդէն բացուած էր համարում և երբ մի ռուսաստանցի եպիսկոպոսի անունն իբրեւ չորրորդ ընտրելի դնելու առաջարկութեան հակառակ կարծիք յայտնեց աշխարհական պատգամաւորներից մէկը, նոյն սրբազանը հանդիսաւոր եղանակով իսկոյն պատասխանեց. «ուրեմն մենք էլ Տաճկաստանի Հայոց եռանուն ցանկը չենք ընդունում»¹⁾: Եւ ժողովը զիջողութեամբ խաղաղութիւնը պահեց:

1) Կ. Պօլսի մի որոշ շրջանի ուղղութեան և ընթացքի մէջ տեղի ունեցած փոփոխութեան իբրեւ մի նմուշ յառաջ ենք բերում այստեղ «Արեւելքի» (1891, Հոկտ. 28) խմբագրական յօդուածի խօսքերը. «Գերապատիւ Սուրբիաս եպիսկոպոս աննպաստ կերպիւ մը ծանուցուեցաւ Թուրքիոյ Հայոց կաթողիկոսական վերջին ընտրութեան ժամանակ, երբ Էջմիածնի ընտրողական ժողովոյն մէջ և արտաքոյ ժողովոյ քննադատեց Թուրքիոյ Հայոց հետեւած ընթացքն ի մասնակցութիւն կաթողիկոսական ընտրութեան, գժգոհութիւն յայտնեց Թուրքիայէն ընտրուած երկուց կաթողիկոսաց, Աւհ. Տ. Մատթէոսի և Աւհ. Տ. Գէորգի ընթացքին

Բ.

1886-ին Սինօղի անդամներ արձակուեցան և նորերը կարգուեցան. կարգուեցան և մի քանի թեմերի նոր առաջնորդներ: Հանգուեցաւ Վեհ. Կաթողիկոսն այս փոփոխութիւններն և կարգադրութիւններն արեց, որպէս զի թէ Ս. Էջմիածնի և թէ վիճակների մտաւոր և բարոյական պիտոյքներին բաւականութիւն տուած լինի և թէ ուսսահայոց եկեղեցեաց և եկեղեցականաց կառավարութիւնը բարւոքած:

Յաւօք սրտի պէտք է ասենք, սակայն, որ նոր պաշտօնների կոչուածների մի մասը ոչ մի բանով չարդարացրեց Վեհ. Հայրապետի իրանց վերայ դրած յոյսն և ակնկալութիւնն: Իրերի դրութիւնը, եթէ իրաւունք չը համարենք աւելին ասելու, նոյնը մնաց:

Փաստերը, հարիւրաւոր փաստերն իրանք պիտի խօսէին, բայց

վրայ: Մակար Սրբազանքի Կաթողիկոսանալու իրաւունքն և արժանիքը ջատագովելով՝ չընդունեց թուրքիացի եպիսկոպոսի թեկնածութիւն յետ բեկման 'սերսէս Սրբազանի ընտրութեան, և ըստ ոմանց՝ այնքան յառաջ գնաց, որ արտայայտեց թէ Թուրքիոյ Հայք աւելի վնաս քան օգուտ ունեցեր են Մայր-Աթոռոյն...: Սուքիաս եպիսկոպոսին վերագրուած լեզուն անշուշտ արժանի չէր հայ եկեղեցւոյ միութեան նախանձախնդիր եպիսկոպոսի մը, և այս տեսութեամբ Սուքիաս եպիսկոպոս ոչ շուազ քննադատեցաւ Թուրքիոյ Հայոց լրագրութեան մէջ... բայց վերջերս Էջմիածնի գործիչ Հայրերը կերպարանափոխ եղած լինել կը թուին: Սուքիաս եպիսկոպոս, երբեմն հակառակորդ Թուրքիոյ Հայոց Ազգ. Վարչութեան ընթացքին, վերջերս կը ներկայանար իբրեւ ջերմ պաշտպան Թուրքիոյ Հայոց մասնակցութեան իրաւանց, և կը դրուատէր Թուրքիոյ հայ եպիսկոպոսաց արժանիքն ու իրաւունքը Վեհ. Տ. Մակար Կաթողիկոսին յաջորդելու:

Այս փոփոխութեան պատճառներն անձնական էին, ըստ մեծի մասին. և արդէն մարդկօրէն խորհելով, անձնական պատճառներու պէս հզօր շարժառիթներ չը կան այս անցաւոր և մեղաւոր աշխարհիս մէջ...:

Սուքիաս եպիսկոպոսի սրտին մէջ ճշմարիտ հայ եպիսկոպոսի բնազդներն արթնցած էին, և վերահաս վտանգին դէմ Թուրքիոյ Հայերն ի զգուշութիւն յորդորելու պէտքն անկեղծապէս կը զգար:

Նորանց մի առ մի յառաջ բերելն այստեղ չեն ներում մեզ ոչ մեր զրութիւնն և ոչ հանգամանքները. ուստի բաւականանանք այնքանով, որքան յիշատակել հնարաւոր է:

Եջմիածինը նիւթական մեծ-մեծ կորուստներ և զրկանքներ կրեց: Մի կողմից նորա կալուածները այգի, անտառ բարձի թողի եղած՝ փչացան, որը չորանալով, որը խոպանանալով. վանքի վարելահողերից և ջրից այս կամ այն վաղարշապատցի շահուում էր ազատ և անվճար, շատ անգամ վանքի գութաններով և մշակներով. կամ թէ մինը Երեւանից գալով ահագին տարածութեան հող էր ստանում այգի ձգելու այն միակ պատճառով, որ «աղերսարկուն դուրով տաղանդաւոր անձն, կարէ պիտանի լինել Ս. Եջմիածնի, փոխելով զքնակութիւն իւր ի վաղարշապատ». Մայր Աթոռի տնտեսական մասի կառավարութեան մէջ այնպիսի ծախսեր երեւեցան, որ երբեք տեսնուած չէին և չը պիտի լինէին. թանկագին եւրոպական խմիչքներ և ուտելիքներ այնպիսի քանակութեամբ էին կրւում Թիֆլիսից, Երեւանից, որ այս կամ այն վաղարշապատցու տանից տարին մի կամ երկու անգամ հազարներով վաճառէին հանում շշեր. անցեալ տարի Սարտ ամսում մի տանից վաճառ հանեցին Կախէթի մի ռուբլիանոց գինու հազար շիշ ¹⁾: Հանգուցեալ Հայրապետը ցաւօք սրտի նկատումէր այս բոլորը, բայց հնարաւորութիւն չէր գտնում բազմաթիւ պաշտօնեաների փոփոխութիւն անել, որ բաւական դժուար էր ի հարկէ, ժամանակին և հանգամանքներին նայելով, ուստի և երբեմն այս կամ այն յափշտակութեան կամ անհաւատարմութեան մասին իրան յայտնողին պատասխանում էր վշտալի կերպով. «Զգարշելիսն ծածկել իմաստութիւն է» ասում է Սողոմոն:

Եթէ ի նկատի առնենք Ս. Աթոռիս մեծ կալուածների—գիւղերի կորուստ մատնուած արդիւնքները, աւելի տխուր փաստեր կունենանք:

Մի օրինակ. 1889 թուին Բջնի վանքական գիւղի երկրի բերքերի

1) Այս պատմել է անցեալ Ապրիլին Ս. Սուքիաս եպիսկոպոս մի քանի անձանց ներկայութեամբ:

կապալառութեան ցանկացողներէից մի երկուսը Սինօդին առաջարկում են իրանց պայմանները—տալ հարիւր տասն և հինգ խալվար ցորեն և օրինաւոր գրաւական. Սինօդը նորանց չէ տալիս, այլ տալիս է Յ.... եպիսկոպոսին, որ կապալառութի պարտաւորութիւնով, բայց առանց գրաւականի՝ տալիս է այսպիսի ստորագրութիւն. «Նախ... խոստանամ և պարտաւոր եմ... յանձնել ցվերջ սեպտեմբերի տարւոյս մի հարիւր երեսուն խալվար մաքուր և չոր ցորեան... Երրորդ՝ Սինօդն չունի իրաւունս պահանջել յինչն աւելի ինչ քան զնշանակեալ մի հարիւր երեսուն խալվար ցորեանն. վասն զի յաւելեալ արդիւնքն եթէ իցեն, ունին մնալ ի սեպհականութիւն իմ. չորրորդ՝ եթէ անկարող գտայց ժողովել լրիւ զնշանակեալ մի հարիւր երեսուն խալվար ցորեանն, կամ եթէ բերքն վարուցանից վնասեսցին ի պատահարաց յամենայն դէպս պատասխանատու եմ և պարտաւոր ի կատարել ճշտիւ զայս խոստումն իմ. իսկ եթէ քանակութիւն ցորենոյ ոչ լրացի ի բահրայից նոյն գեղջ, յայն դէպս պարտաւոր եմ զպակասեալսն գնել ի սեպհականութենէ իմմէ կամ ըստ համաձայնութեան Սինօդիդ վճարել զկանխիկ դրամս ընթացիկ արժողութեամբ...» Ասկայն այսքան պարզ պարտաւորութիւններ յանձն առնողն տալիս է Սինօդին միայն քառասուն հինգ խալվար ցորեն: Սինօդը նորան ուղարկում է Սեան «մինչև լցուսցէ զպակասորդն ցորենոյն կամ հատուսցէ զգինն՝ հաշուելով ըստ ներկայ ընթացիկ գնոյն խալվարն 30 ուրբլի, ընդ ամենայն 2548 ուրբլի»: Արբազան կապալառուն հինգ ամիս Սեան մնալուց յետոյ կոչուեց Ս. Աթոռս, ի հարկէ վճարումից ազատ մնալու պայմանով:

1890 թուին Եղուարդ և Յշական գիւղերի կապալը կամենում են տալ մի ոստիկանական աստիճանաւորի, որի հետ ընկեր էր մասնաւոր պայմանով և վաղարշապատցի Բերք Տէր-Պետրոսեանցը, 9500 ուրբլու: Յունիսի 7-ին հրամայւում է այդ մասին օրագիր կազմել, բայց մի երկու օրից յետոյ ուրիշները գալիս և առաջարկում են 10500 ուրբլի: Որպէս զի վերջիններիս հեռացնեն, հրամայում են յայտնել, թէ այլ ևս այդ գիւղերը կապալով չեն տրուում, այլ վանքը պիտի նշանակի բահրա ժողովող մի կառավարիչ: Այդ մտքով մինչև անգամ կազմւում է օրագրի սեւագիր. բայց երբ 10500

ռ. առաջարկողները հեռանում են, Յունիսի 12-ին դարձեալ հրամայում են օրագիր կազմել յիշեալ գիւղերը առաջիններին, 9500 ռուբլի առաջարկողներին տալ, այն էլ միայն 3000 կանխիկ ստանալու պայմանով, որ նոյնպէս մեծ զիջողութիւն է:

Մայր Աթոռի անմիջական կառավարութեան ներքոյ գտնուած կալուածներից անցնելով միւս վանքերի կալուածներին տեսնում ենք դարձեալ զարմանալի երևոյթներ:

1887 թուի Հոկտ. -ի 23-ին Սինօղում կայացած է մի օրագիր Զարեքայ վանքի վանահօր մասին, որի մէջ ասուած է թէ՛ 1877 թուից (տասը տարուայ ընթացքում) ստացուել են Սինօղում զանազան բողոքներ «վասն անհաւատարմութեան և առհասարակ վասն վնասակար գործողութեանց նորա (վանահօր)» Տփլիսի կոնսիստորիայից և Գանձակի հոգևոր կառավարութիւնից թէ Սինօղը նորան թէև սաստել, յանդիմանել է և «զգուշացուցեալ է յետս կալ ի իւրդախ և վնասութեան արարմանց», սակայն նա շարունակել է «զվանահայրական պաշտօնն ըստ հաճոյից կամաց իւրոց, տալով զնշանաւոր վնասս վանիցն և գաղելով զարդիւնս կալուածոց նորին»։ Թէ՛ «վնասակար գործողութիւնք Աստուածատուր վարդապետի և անհաւատարմութիւնք նորա ի վնաս և ի զրկանս վանիցն ապացուցեալ են քննութեամբ հոգևոր կառավարութեան Նիսաւէտապօլու»։ Թէ՛ նոյն վանահայրը «ի 1877 թ. Եւրոպայի զանազան համաժողովներու Սինօղին» և այլն։ Ուստի և կարգադրուած է «պահանջել յԱստուածատուր վարդապետէն զերկուս հազար ռուբլիս յօգուտ ձեմարանի Աթոռոյս և թողուլ զնա յապաշխարութեան առանց վեղարի ի Ս. Գայիանեայ վանս ցվճարումն այսոցիկ դրամոց»:

Մի քանի ամսից յետոյ հրամայուած է մի օրագիր կազմել նոյն վարդապետի անմեղութեան մասին և թոյլատրել, որ գնայ իւր պաշտօնին։ Սրբազան Երեմիա եպիսկոպոսը չէ ստորագրում այդ օրագիրն ասելով՝ թէ Սինօղի պատիւն այդքան չէմ կարող ստորացնել, որ փաստերով մեղաւոր ճանաչածին փաստերի հակառակ անմեղ հրատարակեմ։ Եթէ կամենում են ներել, ներողութեան դէմ ոչինչ չունիմ ասելու և օրագիրը կստորագրեմ։ Նորին Սրբազնութեան այս խօսքերից յետոյ փոխւում է այդ օրագիրն և նորա փո-

խարէն կազմուած է մի ուրիշը 1888-ի Յունիսի 24-ին, ուր ասուած է. «Առ Նորին Սրբութիւն Հասեալ տեղեկութիւնք Հաւաստի արարին զանմեղութիւն Աստուածատուր վարդապետի և բողոքքն այնոքիկ երևեցան զրպարտութիւնք յառաջացեալք ի կրից ¹⁾» ուստի Հռոմէական. որովհետեւ ըստ տեղեկութեանց, Հասելոց առ Սրբազնագոյն Կաթողիկոսն ազգիս Աստուածատուր վարդապետի վարեալ է զվանահայրութիւն Չարեքայ վանից ամենայն Հաւատարմութեամբ... ուստի կրկին նշանակել զԱստուածատուր վարդապետն վանահայր Չարեքայ վանից, ազատ Համարելով զնա ի վճարմանէ երկուց Հազար ռուբլեաց յօգուտ ձեմարանի»:

Սրչափ էլ առաջ բերածները իբրեւ մտաւոր և բարոյական անկման տխուր պատկեր ցաւ պատճառեն բարեսէր ընթերցողի զգայուն սրտին, այսու ամենայնիւ շատ աննշան են երևալու այն ամենամեծ չարիքի առաջ, որի մասին այժմ պիտի խօսինք. չարիք, որի տուած ծանր Հարուածն այսօր զգալի է ամենքի Համար. — այդ չարիքը՝ անարժանների ձեռնադրութիւնն է: Թէ որքան թուով քահանաներ ձեռնադրուեցան վերջին տարիներում Երևանի և Կարաբաղի թեմերում, — յայտնի է ամենքին: Մեր ժողոված տեղեկութիւնից երևում է, որ Երևանի թեմում սրբազան Սուրբապետ Եպիսկոպոսն, որ երեք չորս տարի վարում էր վիճակի թեմակալի փոխանորդի պաշտօնն, չորս ու կէս տարուայ մէջ ձեռնադրութեան Հրաման է խնդրել Հարիւր և երեք քահանայացուների Համար, որոնցից ութսուն և չորսինն ստացել և ձեռնադրել է:

Ո՛րպիսի անձինք են ձեռնադրուել:

Տգէտ, անուս, անկիրթ. իսկ ոմանք նորանցից՝ նաև Հասարակու-

1) Եթէ Տփլիսի կոնսիստորիայի և Գանձակի հոգևոր կառավարութեան պաշտօնական բողոքներն էլ համարուած է զրպարտութիւնք յառաջացեալք ի կրից՝ գոնէ ի նկատի ունենալու էին, որ Սինօդն ինքն ասել է, թէ «ի 1877 ամէ ցայսօր չանսաց նաև ոչ միում ի հրամանաց Սինօդիս»:

Մեղադրական օրագրի մէջ մի առ մի յիշուած են թէ ո՞վ ինչ մտքով բողոքել է նոյն վանահօր վերայ, արդարացնող օրագրում չը կայ ոչ մի հաստատութեան և անձի անուն, որոնցից հասած տեղեկութիւնները «Հաւաստի արարին զանմեղութիւնն»:

Թեան կասկածին և մեղադրութեան ենթարկուածներ վարք ու բարքի կողմից:

Ահա բազմաթիւ օրինակներից մի քանիսը:

Երևանի կոնսիստորիայն 1888 թուին հոկտ. 12-ին (№ 3412) խնդրում է Սինօգից հրաման քահանայ ձեռնադրելու Դաւալու գիւղի վերայ դպիր Արսէն Տէր-Յարութիւնեանցին, ներկայացնելով և նորա ուսման մասին «Հաւաստաբանութիւնը»: Այդ Հաւաստաբանութիւնն, որ իւր ձեռքով կազմել և ստորագրել է Գեր. Սուքիաս եպիսկոպոսն իբրև կոնսիստորիայի ատենապետ, ասում է. «Դաւալու գիւղացի Արսէն Տէր-Յարութիւնեան Տէր-Խաչակեանց ի 22-ն Յունիսի 1888 ամի ներկայացեալ յԱտենի վիճակային կոնսիստորիայիս Հայոց Երևանի՝ ենթարկեցաւ հարցաքննութեան և եցոյց զյետագայ ընդհանուր-լի-նո. ի կրօնագիտութեան արհար, էլեղեցական պատմութեան անո, ի որբալան պատմութեան շին և նոր կրօնաբանաց անո, յընթերցանութեան միջակ, ի բերանանութեան անո, ի լարգմանութեան ի գրաբարէ յաշխարհաբարն միջակ 1): ի գործադրութեան արհարաց, անկարգ, յեղեղեցական երգեցողութեան լաւալու և ի գրչութեան ըստ վերագրելու ինքնայնութեան: Այդ ինքնաձեռն գծագրութիւնը արժէ տեսնել միայն:

Ա. Սինօգը նոյն թուի Նոյեմբ. ի 23-ի օրագրում ամբողջովին մէջ բերելով այդ Հաւաստաբանութիւնը ասում է. «Որովհետև ըստ Հաւաստութեան վիճակային կոնսիստորիայի Հայոց Երևանայ ժողովրդականք Դաւալու գեղջ բաղկանան յ350 տանց և ունին զկարևոր պէտս և՛ս միոյ քահանայի (գիւղում կան արդէն երկու քահանաներ), և առաջարկեալ քահանայորդի Արսէն Տէր-Յարութիւնեան ընդհանուր և այն էլ ոչման, վասնորոյ յանձնել փոխանորդի Թեմակալին Հայոց Երևանայ Դերապատիւ Սուքիաս եպիսկոպոսին վերածել զնա յաստիճան քահանայութեան»:

Մաստարայ գիւղի ժողովրդականներից մի խնդիր է մատուցում

1) Երբ որ կարգաւ անգամ չը գիտէ, անգրագէտ է, կամ ըստ կոնսիստորիայի ասած՝ «ընթերցանութեան միջակ» է, էլ ինչ թարգմանութիւն, մեզ անհասկանալի է:

1886-ին Վեհ. Կաթողիկոսին, թէ իրանց քաջանան միայնակ չէ կարողանում հովուել գիւղը. ուստի և ձեռնադրել խնդրում են նոյն գիւղացի Խաչատուր Տէր-Գէորգեանին: Խնդիրը յանձնւում է Սինօղին, որ «կոչեալ զնա յԱտեան իւր և հարցաքննեալ էֆէփ ան-ընդո-նակ. ուստի և առաքեաց ի Հառիճոյ վանս զի ուսցի զքաջա-նայապատշաճ գիտելիս, բայց ըստ յայտնելոյ Կոստանեանց աւագ քաջանայի չէր զնացեալ անդր. յետ որոյ և ըստ խնդրոյ իւրում առաքեցաւ առ Կարապետ եպիսկոպոսն սակս ուսանելոյ ի նմանէ: Ապա մօրին ի Սինօղ երեք խնդրագիրք ժողովրդականաց Մաստա-րայ գեղջ... յորոց երրորդաւն բողոքէին զանբարոյականութենէ և զմարդասպանութենէ Խաչատրոյ Տէր-Գէորգեան, զորպիսի խնդրա-գիրս Սինօղս... ի 20 Մայիսի 1887 ամի առաքելով ի Կոնստնտնու-պոլս Երեւանայ առաջադրեաց ստուգել զհանգամանս բողոքանաց նոցին... Կոնստնտնուպոլս մատուցանէ զգործն քննութեան, յորմէ տեսանի, զի քաջանայացու Խաչատուրն ի գուր անբաստանեալ է ի սպանութեան, բարեբարոյ է և արժանի քաջանայական կոչման (անընդունակութեան մասին այլ ևս ոչինչ չէ խօսուում)... յանձ-նել Գերապատիւ Սուքիաս եպիսկոպոսի վերածել յաստիճան քա-ջանայութեան»:

1890 թուի Սեպտեմբերի 26-ին Երեւանի Կոնստնտնուպոլս Սինօ-ղից իրաւունք է խնդրում քաջանայ ձեռնադրելու Բեգլշլաղլու գիւղի վերայ Ռուբէն Տէր-Ղազարեանցին մի խնդրի համաձայն, որ տուել է գիւղացիների մի մասը Թեմական փոխանորդ Սրբազան Սու-քիաս եպիսկոպոսին: Չը նայելով՝ որ գիւղի միւս մասը բողոքել է տիրացուի վատթար վարքի դէմ, չը նայելով՝ որ այդ գիւղն, ինչ-պէս ասուած է նոյն յայտարարութեան մէջ, ունի միայն 150 տուն ժողովուրդ և երեք քաջանայ, Կոնստնտնուպոլս դարձեալ մի չոր-րորդի, յիշեալ Տէր-Ղազարեանցին ձեռնադրելու իրաւունք է խնդ-րում, ներկայացնելով այսպիսի հարցաքննական թերթ, որ ստորա-գրած են՝ առնանապետ Կոնստնտնուպոլսի Սուքիաս եպիսկոպոս և ան-դամք. — «Ի կրօնագիտութեան թոյլ, ի Սրբազան պատմութեան Հին և Նոր կտակարանաց թոյլ, յընթերցանութեան միջակ, ի թարգ-մանութեան ի գրաբարէ յաշխարհաբարն միջակ»:

Նոյն թուի Հոկտեմբերի 25-ին նոյն կոնսիստորիայն խնդրում է հրաման քահանայ ձեռնադրելու Թագաքեանդ գիւղի վերայ Յարութիւն Տէր-Մելքիսեդեկեանին, ասելով յայտարարութեան մէջ թէ՝ որպէս խնդրատու ժողովրդականք վկայում են, յիշատակեալ քահանայացուն «Հռչակեալ է ի վարս և ի բարս»: Այդ վարք ու բարքով Հռչակուած անձը, ինչպէս երևում է նահանգական դատարանից ստացուած գրագրութիւնից, մեղադրուել է գողութեան մէջ, և արդարացել:

Այդ տիրացուն, ենթարկուելով կոնսիստորիայում հարցաքննութեան՝ երևացել է «ի քահանայապատշաճ գիտելիս ընդունակ». այսինքն՝ ինչպէս սովորաբար ուրիշները, նոյնպէս և նա «ի կրօնի միջակ», յընթերցանութեան լաւ, ի թարգմանութեան միջակ, յերգեցողութեան լաւ, ի գործածութեան տօնացուցի թոյլ:

Նոյն թուին և նոյն կոնսիստորիայն խնդրում է իրաւունք սարկաւադ ձեռնադրելու Ալէքսանդրապօլի ս. Աստուածածին աւագ եկեղեցու համար ոմն Նալչեանցին, որի հարցաքննական թերթը, որ կազմել է ինքն Սրբազան Սուրբիս եպիսկոպոս, ասում է. «կրօնագիտութեան միջակ, Սրբազան պատմութեան Հին և Նոր կտակարանաց միջակ, յընթերցանութեան լաւապէս, ի թարգմանութեան ի գրաբարէ յաշխարհաբարն լաւապէս, յերգեցողութեան լաւ, ի գործագրութեան տօնացուցի միջակ»: Բաւական է:

Էլ չենք խօսում մեր եկեղեցիների կառավարութեան, բարեգործութեան և տնտեսական մասի գրութեան վերայ. — ամենքին յայտնի է, թէ նոքա ինչ վիճակի են հասած. ամենքին էլ յայտնի են օրինակներ, որ երբ մի տեղ ժողովուրդը երեցփոխանից հաշիւ էր պահանջում, վերջինիս հաշուեմատեաններն էին խլում փախցնում ժողովրդի ձեռքից. կամ թէ՛ մի երեցփոխ մի անգամ պաշտօն մտնելով՝ տասը տարի շարունակ կարող էր այդ պաշտօնի մէջ մնալ և եթէ ժողովուրդը ցանկանում էր մի ուրիշին ընտրել, չէր կարող իւր այդ սեպհական իրաւունքը գործ դնել, և այլն և այլն:

Զենք խօսում նմանապէս և մեր դպրոցների մասին:

Գ.

Մի խումբ մարդկանց համար ցանկալի դրութիւնն արդէն ստեղծուած էր. մնում էր նորա տեղականութիւնն ապահովել:

1890 թուին թէ Մայր Աթոռումս և թէ մերձակայ ժողովրդի մէջ խօսւում էր թէ Սինօղի առաջին անգամ Ս. Երեմիա եպիսկոպոսը պիտի նշանակուի Բեսարաբիայի վիճակի առաջնորդ՝ և այս պատճառով լուրի հետ միշտ այն էր լսւում, թէ ուրեմն Սինօղի առաջին անգամ կը մնայ Ս. Սուքիաս եպիսկոպոս, որ հարկաւոր դէպքում կը լինի և տեղակալ: Միևնոյն ժամանակ հետզհետէ մի քանի տարուայ մէջ Սինօղի անդամներէց երեքը պակասել էին. և նորանց տեղերը լցնելու պատրաստի անձինքների անուններն էին յիշւում մէջտեղում: Սակայն Վեհ. Հայրապետը իրան յայտնի նկատումներով այդ կարգադրութիւններն անելու վերջնական որոշումն դեռ չէր կայացրել, որ յանկարծազաս մահը ի սուգ համակեց ամենքիս:

Հայրապետի մահից յետոյ Սինօղն օրէնքի համաձայն օրագիր կազմեց Սրբազան Երեմիա եպիսկոպոսին Ատենապետի Տեղակալ ճանաչելու համար: Օրէնքի այս սահմանքի կատարուելովն արդէն շատ հաշիւներ և ակնկալութիւններ կանգ առան մի մեծ դժուարութեան առաջ: Այդ դժուարութիւնը բաւական հարթելու միակ ելքը կար դեռ.—Սինօղի երեք պակաս անդամների տեղերը լրացնել ցանկալի ընտրուածներով: Հագիւ չորս օր էր անցել Վեհափառ Կաթողիկոսի մահուան վերայ, և դեռ հանգուցեալի մարմինը հողին չը յանձնած՝ Ս. Սուքիաս եպիսկոպոսն զիմումէ Սինօղի ատենում Ամենապատիւ Տեղակալին յետագայ առաջարկութիւնով. «Որովհետև Սինօղը պիտի ընթացք տայ դործերին մի ամբողջ տարի, և առաջներս էլ ընտրութիւն ունինք, ուստի լաւ կը լինէր, որ Սինօղում ընտրէինք երեք նոր անդամներ և առաջարկէինք հաստատութեան»¹⁾: Սորան Տեղակալ Սրբազանը պատասխանում է. «Դեռ

1) Որովհետև մի քանի անգամ լրագրներում աշխատեցին ուրանալ Գեր. Սուքիաս եպիսկոպոսի այդ առաջարկութիւնը՝ աւելորդ չէնք համարում կարգել այստեղ («Արևիքի» 1891 թ. 28 Նոյեմբ.) մի թղթակցի

մտածենք մեր Հանգուցեալ Հայրտալետի յուզարկաւորութեան և թաղման Հանդէսը պատշաճապէս կատարելու և եկած և գալիք Հիւրերին ընդունելու և գոհ կացնելու մասին. իսկ Սինօդի անդամներ ընտրելն ու չընտրելը իմ գիտենալիքս է: Ժամանակին ինչ որ հարկաւոր է կը տնօրինուի»:

Հանգուցեալ Կաթողիկոսի թաղումից յետոյ Ամենապատիւ Տ. Տեղակալը կամեցաւ բանալ տալ Վեհարանի դռներն և կայքը ցուցակագրել, ի ներկայութեան մի քանի քաղաքների պատգամաւորների և պ. Ա.-ի, որպէս արել էր Սինօդն և 1882 թուին Հանգուցեալ Գէորգ Կաթողիկոսի մահից յետոյ: Սրբազան Սուքիաս եպիսկոպոսը ինդրեց Վեհարանը բանալ Կաթողիկոսի եօթնօրեայ հոգեհանգիստը կատարելուց յետոյ. իսկ պատգամաւորների ներկայ լինելուն հակառակ եղաւ. որին միացան և մի երկու անդամներ: Տ. Տեղակալը զիջանելով նորանց այդ մասում՝ Վեհարանի բացումն սակայն փոխանակ եօթնօրեայ այգի վախճանին թողնելու՝ նշակեց Ապրիլի 24-ին: Անմիջապէս տարածուեց կատարուած գողութեան համբաւը: Այդ մասին այստեղ մանրամասնութիւններ յառաջ բերելու չենք թէ ինչպէս է կատարուել այդ գողութիւնը, քանի որ ամենքին յայտնի է: Մենք կամենում ենք միայն հերքել այն զրպարտութիւնները, որոնք այդ առիթով տարածեցին Տաճկաստանի Հայոց մէջ:

1. «Արևելք» լրագրի Յուլիս 22-ի (1891) №-ում տպած թղթակցական քաղուածներէից առաջինում ասուած է. «Երբ որ Սուքիաս Սրբազանը յայտնեց Սինօդին՝ Վեհափառի գոյքի գողանալու մասին, և մատնանիշ արեց փոքրաւոր Յակովբի վերայ, Տեղակալ Սրբազանն իւր ստորագրութեամբ գաղտնի թղթեր գրեց քննիչին, և մեղադրանքներ ջանաց հաստատել Սուքիաս և Ներսէս սրբազանների վերայ. և թէ դոքա գողակից են Յակովբին, որ ոչնչով չը կարողացաւ հաստատել»:

Խօսքերը, թղթակցի, որ ուրացողների կուսակիցներից է. «Սուքիաս և միւս անդամները Սինօդի մէջ կը պնդեն, որ անդամութեան առաջարկելի եկեղեցականներու ցանկը Սինօդի մէջ կազմուի և Սինօդականաց ընդհանուր համաձայնութեամբ ընտրելիներ առաջարկուին»:

2. Նոյն լրագրի Սեպտեմբերի 6-ի №-ում էջմիածնի թղթակիցը կամենալով հերքել «Մշակի» անցեալ տարուայ 89 №-ի խմբագրական յօդուածի այն մասն, որ վերաբերում էր երկու եպիսկոպոսներին, ասում է. «պ. Արծրունու երկրորդ մեծ սխալն... այն է, որ «Արևելքի» հաղորդած սողոգ իրողութիւնը յեղաշրջելով աշխատում է ցոյց տալ, որ իբրև թէ «քննիչը ուզեցել է խուզարկել Ս. Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսների սենեակներն և նոյն ինքն Տեղակալ Երեմիան թոյլ չէ տուել»:

Արդ, եթէ քննիչն ու նահանգական դատարանի Պրօկուրօրն Հաստատ փաստ ունենային, թէ Վեհարանում կատարուած գողութեան յայտնութեան համար անհրաժեշտ է նոցա սենեակները խուզարկել, ոչ Երեմիա եպիսկոպոսն և ոչ էլ նրանից բարձրագիւր անձն իրաւունք կունենար նոցա առաջ արգելք դնելու, որովհետև նոքա պատասխանատու կը մնային խիստ օրինաց և Բարձրագոյն Իշխանութեան առաջ, որ անպայման կերպով ցանկանում էր գործը պարզել: Բայց չի խուզարկելու պատճառն այն էր, որ Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսները այնքան պատուախնդիր անձնաւորութիւնք են, որ կը պահանջէին թէ խուզարկութիւնն ըրոյ ցուցմամբ է լինում և այն ժամանակ խայտառակութիւնն աւելի մատնտու անձին վերայ կրնկնէր:

Վերոգրեալներին պատասխանելու համար կասենք հետեւեալը: Սրբազան Տեղակալը ոչ միայն մտքով չէ անցկացրել Գեր. Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսներին իբրև Յակովբին գողակից ներկայացնել քննիչին, այլ և կարելի եղած օրինաւոր միջոցը գործ է դրել հետու պահել նորանց այդ գործից. և ինչ որ հաղորդել է «Մշակն» այդ մասին ոչ թէ մեծ սխալ է, այլ մեծ ճշմարտութիւն. որի ապացոյցը նախ այն է, որ «Մշակի» այդ յօդուածը ամբողջովին թարգմանեց և «Тифлисскій Листокъ» լրագիրը, հետեւաբար ծանօթ եղաւ և այն պաշտօնական անձանց, որոնց անունն յիշուած էր յօդուածում և նորանք հարկ չը համարեցին հերքել. երկրորդ, որ «պատուախնդրութիւնը», պահանջում էր «Մշակի» արածի հերքումը «Մշակում» տրպագրել, օրէնքի տուած իրաւունքով. և մինչև անգամ դատի ենթարկել. իսկ այդ չարեցին վերոյիշեալ երկու սրբազանները: Ռու-

սաստանի լրագրի գրուածը Տաճկաստանի լրագրում հերքելը — պատուախնդրութիւն չէ:

Տխուր պարտաւորութիւնների կատարումից և զանազան տեղեղերից եկած պատգամաւորների վերադարձից յետոյ Ս. Տեղակալը իւր առաջին հոգսն արեց առաջարկել Սինօղի երեք անդամներ ի հաստատութիւն:

Մի քանի շաբաթից յետոյ այդ լուրն առնում են Գեր. Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսները և կարծելով, թէ արդէն առաջարկութիւնը Պետերբուրգ հասած կը լինի՝ մի հեռագիր են ուղղում Ներքին գործոց նախարարին իրանց և Սինօղի միւս երկու անդամ Գեր. Սարգիս և Արիստակէս Դաւթեան եպիսկոպոսների ստորագրութեամբ. իսկ երբ որ պ. Կառավարչապետը պահանջում է Սինօղից առաջարկուածների ծառայութեանց ցուցակը՝ մի գրութիւնով էլ նոյն չորս անձինք դիմում են Նորին Բարձր Վերազանցութեան, որ այս է. (աշխարհաբար թրգմ.)

Հրամայում է կատարել՝ Սինօղի անդամներ. Սուքիաս եպիսկոպոս, Ներսէս եպիսկոպոս, Սարգիս եպիսկոպոս, Արիստակէս (Դաւթեան) եպիսկոպոս:

Ի 23 Մայիսի

1891 թ.

№ 2072:

«Ներքեւում ստորագրուած Սինօղի անդամներս պատիւ անձին համարեցինք դիմել հեռագրով, Ներկայ Մայիսի 20-ին, Ներքին գործերի Տէր նախարարին յետագայ խօսքերով. «Լսելի եղաւ մեզ, որ Սինօղի նախագահ անդամը Կովկասի պ. Կառավարչապետի ձեռքով առաջարկել է ի հաստատութիւն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵՏՈՒԹԵԱՆ Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռիս Միաբանութեան անդամներից մի քանիսին Սինօղի ատենակալների պակասը լրացնելու համար: Որովհետեւ մեր հարցմունքին Սրբազան նախանգամից չը կարողացանք ստանալ դրական պատասխան, ուստի՝ օտարահպատակ մեր ազգայիններին գայթակրելով թիւն չը պատճառելու համար՝ պարտաւորուած ենք գտնում մեզ թախանձել Ձեր Բարձր Վերազանցութիւնից, որ եթէ իսկապէս անդամութեան պաշտօնի համար առաջարկուած են մարդիկ, Դուք չառաջարկէք նրանց ի հաստատութիւն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

մունքին Սրբազան նախանգամից չը կարողացանք ստանալ դրական պատասխան, ուստի՝ օտարահպատակ մեր ազգայիններին գայթակրելով թիւն չը պատճառելու համար՝ պարտաւորուած ենք գտնում մեզ թախանձել Ձեր Բարձր Վերազանցութիւնից, որ եթէ իսկապէս անդամութեան պաշտօնի համար առաջարկուած են մարդիկ, Դուք չառաջարկէք նրանց ի հաստատութիւն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ՄԵՆՈՒԹԵԱՆ, որովհետև Հայաստանեայց եկեղեցու վաղեմի կարգերի և սովորութիւնների՝ այլ և Պետութեան բացորոշ օրէնքների Համաձայն միմիայն Ամենայն Հայոց Արքագնադոյն Կաթողիկոսի իրաւունքն է իւր Հոգեւոր խորհրդարանի անդամներին նշանակելը՝ և այդ խորհրդարանին այժմս փոխարինել է Սինօդը:

Ձեր Բարձր Գերագանցութեան Դիւանատան գրութիւնով, որ ուղարկուած է Սինօդիս ամսոյս 16-ին, Համար 4498, և որով պահանջուում են երկու Արքագան եպիսկոպոսների և չորս պատուարժան վարդապետների ծառայութեանց ցուցակները, ճշմարտուում է (նոր անդամների) առաջարկութեան լուրը, ուրեմն և առիթ է ներկայանում՝ Սինօդիս Հաղորդակցելու Ձեզ Հետ ներկայ խնդրի մասին Ատենիս անդամների յետագայ կարծիքը յայտնելու Համար:

Արժանայիշատակ ՆԻԿՈԼԱՅ ԿԱՅՅԵՐ ԵՐԿՈՒՄՅԱՆ Կառավարիչ Սինօդիտոսին տուած Հրովարտակից՝ 11-ն Մարտի 1836 ամի, տեսնուում է, որ Հայոց եկեղեցու գործերի կառավարութեան Համար Բարձրագոյն Հաստատուած կանոնադրութեան իբրև Հիմն ծառայել են նոյն աստուածային Հաստատութեան (եկեղեցու) նախկին կանոնադրութիւնները: Արդ՝ այս օրէնքների Համաձայն Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք Կաթողիկոսը ինքն է միշտ նշանակել և արձակել իւր Հոգեւոր խորհրդարանի անդամներին, ամենահին ժամանակներից սկսած: Այս կանոնները Ռուսիոյ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ օրէնագրութիւնների հետ Համակերպելու Համար սահմանուած է, որ Սինօդի իւրաքանչիւր անդամի պաշտօնատարութեան Համար Արքագնագոյն Պատրիարք Կաթողիկոսը Կովկասի Դիւանաւոր Կառավարչի և Ներքին Գործերի Նախարարի ձեռքով առաջարկուում է ի Հաստատութիւն ՕԴՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ երկու անձն: Իսկ Հայրապետի բացակայութեան ժամանակ, եթէ արտօնութիւն է շնորհուում աւագ անդամներից որ և է մէկին նախագահելու Սինօդումս, այդ դէպքում նախագահողի իրաւունքն է կառավարել Սինօդի գործերը բարեկարգութեան և քննական մասերում՝ անդամների այն թուով, ինչ թիւ որ թողել է նախագահ Հայրապետը իւր բացակայութեան ժամանակ, և այնպիսի գործողութիւնների (իրաւասութեան) շրջանակում, որոնք սեպհական են Սինօդին: Ապա թէ ոչ՝ կարող է

Նախանդամի գործողութեան շրջանակի մէջ մտնել և Սինօդական անդամներ փոխելու արտօնութիւնը, որով խանգարուած է Հայաստանեայց եկեղեցու կառավարութեան ներդաշնակ գործը:

Ատեանս աւելորդ չէ համարում Ձեր Բարձր Գերագանցութեանը յայտնելու և հետեւելը: Հայաստանեայց եկեղեցու Բարձրագոյն Կարգադրութեան Հաստատութեան օրից սկսած մեր օտարահպատակ համագգիները տրտնջել են վաղեմի կարգերի ինչ ինչ փոփոխութիւնների համար, այս պատճառով և վերջին չորս Կաթողիկոսական ընտրութիւններին մասնակցել են թուրքահայերը զանազան եղանակներով: Արդ այժմ՝ երբ Սինօդս ամեն ջանք գործ է դնում օտարահպատակ հայերին միահաւան համերաշխութեան բերել և յարգանքով ընդունել տալ նրանց Բարձրագոյն Հաստատուած Օրէնքները, Սինօդիս անդամները ամենահաւատարիմ և ջերմեռանդ հպատակութեան զգացմունքներից շարժուած ցանկանում են, որ այս ճգնաժամում, երբ հօտը զրկուել է իւր Հօտապետից, անվթար պահպանուին ամենայն Հայոց Հայրապետի իրաւունքները, որպէս զի տատանուած մտքերը հաստատուին:

Ձեր Բարձր Գերագանցութեան գիտութեանը հասցնելով վերոգրրեալները Սինօդս պատիւ ունի յարգոյաբար խնդրել Ձեզնից, Ողորմած Տէր, թողնել առանց հետեւանքի Սինօդի Նախանդամի *Դաւթիան* առաջարկութիւնը: Իսկ եթէ անհրաժեշտ համարուի հասցնել այդ առաջարկութիւնը Ներքին Գործերի Տէր Նախարարի գիտութեանը, այդ դէպքում Ատեանս հարկադրուած է գտնում իրեն՝ խնդրել Ձեր Բարձր Գերագանցութիւնից ներկայացնել Նախարարին մեր կարծիքը, աւելացնելով և Ձեր միջնորդութիւնը, որ առանց հեռանքի մնայ այն առաջարկութիւնը»:

Միաժամանակ և նամակներ սկսան տեղալ Պօլիս Սրբազան Պատրիարքի և զանազան եկեղեցականների անունով, որոնցով փաստերն և իրողութիւնները միանգամայն խեղաթիւրուած ներկայացրին, որպէս զի հեռաւոր, հանգամանքներին անձանթ ազգայնոց մտքերը Նախապաշարելով՝ պատրաստած լինին նորանց առաջիկայ ընտրութեան համար:

Բայց ի՞նչ կարող էին սպասել այդ ընտրութիւնից: — Քանի որ

պատահած դէպքերը բոլորովին խորտակեցին իրանց յոյսն ու ծրագիրը ապագայի մասին, քանի որ հասարակաց կարծիքը այս կամ այն անձնաւորութեան վերայ այնքան տխուր խօսակցութեան նիւթ ունեցաւ, անկարելի էր այլ ևս սպասել մի այնպիսի ընտրութեան, որ ապահովէր ստեղծուած դրութիւնը: Միակ միջոցը, որ մնում էր գործ դնել՝ այն էր, որ գոնէ ունեցածի մի նուազ մասը կարելի լինէր պահել, քանի որ ամբողջը կորցնելու յայտնի վտանգ էր երևում:

Պորա համար հարկաւոր էր վաստակել ուրիշների աջակցութիւնը, իսկ այդ աջակցութիւնը ամենայն յարմարութիւնով կարող էին ընծայել Կ. Պօլսի ազդեցիկ եկեղեցականներ իրանց շրջանով, իրանց համակրողների օգնութեամբ, եթէ միայն նորանց այս կամ այն ուղղութիւնը բռնելու մասին համոզելու չափ զօրաւոր լինէին այն միջոցներն, որ գործ էին դրուելու:

Ճանաչելով մեր տաճկահայ եկեղեցականների մէջ արժանաւոր և պատկառելի անձնաւորութիւններ և սրտանց խոստովանելով և գնահատելով նորանց բարեսէր և անհրապուրելի բնաւորութիւնը, չենք կարող միևնոյն ժամանակ չը յիշել ցաւօք սրտի, որ նորանցում սակաւաթիւ չեն և այնպիսիք, որոնց [թոյլ կողմը, փառասիրական ձգտումը շուտով յափշտակուել գիտէ. և որոնց անձնական պատճառները միշտ առաջին տեղն են բռնում հասարակական խնդիրներում. և այդ՝ երեւի, այնքան սովորական երևոյթ է եղել և լինում նորանցում, որ մինչև անգամ «Արևելք» լրագիրը, ինչպէս տեսանք վերևում, կարողանում է առանց ամաչելու մի եպիսկոպոսի գործունէութեան մէջ «անձնական պատճառներու պէս հզօր շարժառիթների» հետ միաժամանակ նկատել «ճշմարիտ հայ եպիսկոպոսի բնագոյներն արթնցած»:

Այսպիսի եկեղեցականներից մի քանիսին Ս. Էջմիածնից հասնում են խիստ հաճոյական նամակներ, և միևնոյն ժամանակ «Արևելքի» 1891 թ. [թղթակցութիւններ այսպիսի բովանդակութեամբ. «Աշխարհականներն ընդհանրապէս և բանիմաց միաբաններն բնաւ համամիտ չեն, որ այստեղից որ և է մէկն ընտրելի լինի Հայրապետութեան» և այսպիսի նամակների և [թղթակցութիւնների հի-

ման վերայ «Արեւելք» (26 Սեպտեմբեր) լրագիրն ինքն էլ կազմում էր՝ խմբագրականներ, ուր ասւած էին լինում. ցաւալի է հաստատել թէ Էջմիածնի մէջ սէր և միաբանութիւն չի տիրեր. Տեղապահն և իւր կուսակիցք վէճի մէջ են Սինօդականաց հետ, Վաթողիկոսական թիկնածութիւններ կը պատրաստուին հոն, և թէպէտ Սինօդի անդամ եպիսկոպոսք միաՀամուռ փափաք կը ցուցնեն, որ այս անգամ Վաթողիկոսը Թուրքիոյ եպիսկոպոսաց մէջէն առնուի, բայց Էջմիածնի մէջ ամեն ոք այս կարծիքէն չէ. յորմէ թիկնածութիւններ, խուլ հակառակութիւններ, փոխադարձ վստահութեան կատարեալ բացակայութիւն. Կամ թէ. Սինօդին մեծամասնութեան ղեկավարք էին Ներսէս և Սուրբիս եպիսկոպոսունք: Այս վերջինք..... ամեն կերպիւ իրենց ձայնը լսելի կընէին, որպէս զի Նոր Վաթողիկոսը Թուրքիոյ հայ եպիսկոպոսաց մէջէն առնուի, ոչ միայն առաջին ընտրեալն, այլ և անոր +անպէտան թուրքիացի լինելու պայմանաւ. 1):

Դ.

Եթէ Սինօդի մեծամասնութեան ղեկավարները միայն այդ մըտքով և այդ ուղղութեամբ իրանց ձայնը լսելի անէին, ոչ ոք չէր կարող մեղադրել Նորանց, տարաբաղդաբար Նոքա այդքանով չր բաւականացան և մի քանի ամսուայ մէջ հետզհետէ այնպիսի անկանոնութիւններ և անխիստական ընթացքի մէջ խրուեցան, որոնց հետեւեալքը, ինչպէս ասացինք, ցաւ պատճառեց ամենիս էլ:

Բայց եթէ այդ ամենի համար ուղղակի պատասխանատու են յանցանք գործող անձնաւորութիւններ, բոլորովին էլ ազատ չեն կարող համարուիլ և այն անձինք, որոնք մի տեսակ քաջալերութիւն տուին Նորանց իրանց գրուածներով և նամակներով:

Յայտնի է արդէն, թէ Սինօդի Նոր անդամների առաջարկութեան առիթով «Արեւելք» լրագիրը (Նորան հետեւելով և «Արեւելք») յառաջ բերեց Տեղակալական խնդիր: Որովհետեւ Տեղակալ Ս. Երեմիա

1) «Արեւելք» 1881 թ. Հոկտ. 26:

եպիսկոպոսն էր առաջարկել անդամներին, հարկաւոր էր նորա իրաւասութիւնը ոչ լինչացնել, որ առաջարկութիւնն ինքն ըստ ինքեան կորցրած լինի իրաւաբանական նշանակութիւնը: Աւ ահա յիշեալ լրագիրն սկսեց շարունակ տալ յօդուածներ, որոնցում կամ մի իրաւաբան էր հանդէս գալիս և ասում թէ Երեմիան Տեղակալ չէ, քանի որ չունի կաթողիկոսական կոնդակ այդ իրաւունքի մասին ¹⁾ կամ մի իշխան էր երևում, որ թէև երկու խօսք հայերէն չը գիտէ, բայց և այնպէս հայ եկեղեցու աստուածաբանական և կանոնական բոլոր դրուածներին տեղեակ՝ առաքելական և այլ կանոնների հիման վերայ պնդում էր, որ Ս. Երեմիան չէ կարող վայելել այնպիսի իրաւունք, որպիսին էր Սինոդի անդամների առաջարկութիւնը:

Տեղակալական խնդրի մասին յիշելով՝ մեր նորաստակը չէ այստեղ կրկին հարցը զարթեցնել և վճռել, քանի որ արդէն վճռուած խնդիր է. մենք կամենում ենք ցոյց տալ միայն թէ այդպիսի խնդրի արժարժումն ունեցաւ իւր վնասակար ազդեցութիւնը: Արձագանքի հէնց առաջին յօդուածի երևալուն պէս՝ Կեր. Սուքիաս եպիսկոպոսը, որ մինչև անդամ Ս. Տեղակալի Սինոդին տուած առաջադրութիւնների ներքե կարմիր գիծ քաշելով՝ կամեցել էր մերժել նորա առաջադրութիւն տալու իրաւունքը, յաիշտակուած իրաւաբան հեղինակի խօսքերից՝ վազում է Սինոդ և մի օրագիր է կամենում կազմել նոյն մօքով, այսինքն՝ որ Ս. Երեմիա եպիսկոպոսը չունենալով Աթողիկոսական կոնդակ՝ Աթողիկոսական տեղակալ չէ, այլ միայն

(1) Այս ասոզները միշտ կրկնում էին իրանց խօսքին իրեն ապացոյց թէ Տեղակալ էր Առկաս Արք-եպիսկոպոսը, որովհետև կոնդակ ունէր Ներսէս Աթողիկոսից, Տեղակալ էր Մակար Արք-եպիսկոպոսը, որ կոնդակ ունէր Գեորգ Աթողիկոսից, Մակարի ունեցած կոնդակի գոյութեան մասին մենք լսել ենք և այժմ էլ կը լսենք, բայց քանի որ Ս. Վահրամ եպիսկոպոս Մանկունին ևս բարեհաճեց իւր ժամանակին (Մանգումէի Եփրեար, 1891, Օգոստոս 12 և 13) մասնակցել ջերմ վիճարանութեանը մի յօդուածով, որ կրում է Աջմ. Սինոդի Ասենապետի Տեղակալ և իրաւունքների՝ վերնագիրը, վասնորոյ գիմում ենք Նորին Արքայնութեան և խնդրում որ յայտնի «Արարատի» խմբագրութեան, թէ այդպիսի կոնդակ գոյութիւն ունեցե՞լ է յիրաւի և ե՞րբ է գրուել:

Սինօդի Ատենապետի տեղակալ. հետևաբար և արտաքոյ Սինօդի ոչ մի իրաւունք չի վայելում. Թէպէտև մեզ անյայտ պատճառով այդ օրագիրը (սափանուեց 1), բայց այդ ուղղութիւնն և համոզումն այնքան յառաջ գնացին, որ երբ Ս. Տեղակալը արդարապէս գթալով Մայր Աթոռի Սիւրբան ծերունի և հիւանդոտ Սինաս վարդապետի վերայ՝ որ Հաղարծնի աղքատ վանքից էր եկել և ապրուստ խընդրում, ընդունեց և հրամայեց սենեակ տալ Ղազարապատում, Սրբազան Սուքիաս եպիսկոպոսն անդամներինց ոմանց հետ Սինօդից հրաման արձակեցին վանական կառավարութեան՝ յիշեալ վարդապետին վանքից արտաքսելու։ Այս միակ օրինակը չէ անիշխանական յանդգնութեան։ Նորա, որոնք տեղակալի իրաւունքները «Սինօդի շրջանից դուրս» պալատենիայի քմահաճ բացաղրութեան վերայ հիմնուելով, համարում էին իրաւազանցութիւն, նոյն մարդիկ երբեք չէին կամենում լսել և իմանալ, որ ինչպէս բոլոր կողեզիական հաստատութիւնների, նոյնպէս և Ս. Էջմիածնի Սինօդի գործավարութեան համար կան որոշ օրէնքներ։ Ամեն մի խնդիր այդպիսի հաստատութեան մէջ ձայների առաւելութեամբ է վճռում, բայց պէտք է որ լսուի և վճռուի Նախագահի ներկայութեամբ, նա է, որ բանում և փակում է նիստերը։ Բայց Սինօդի մի քանի անդամները²⁾

(1) Եթէ օրագիրը խափանուեց, նորա բովանդակութիւնը երևեցաւ դարձեալ «Արեւելք» լրագրում (1891, 10 Սեպտ.)։ Ապացուցանելու համար թէ անզուսպ կիրքն և կատաղութիւնը մինչև որ աստիճան մոռացնել են տալիս մարդկանց վայելչականութեան և պարտաւորութեան տարրական կանոնները յառաջ ենք բերում յիշեալ լրագրից յետագայ տողերը. «Ամենայն համարձակութեամբ կարող ենք ասել, որ գոցանից (տեղակալներից) երեքն՝ Յովհաննէս, Մկրտիչ և Նրբմիա՝ սոսկ նախանդամ են եղած Սինօդի և Պալատենիայով տեղակալ ատենապետի՝ վարչական գործերում, որոնք նոյն հոգևոր ատենի շրջանից դուրս չեն. իսկ եկեղեցական նուիրապետութեան կանոնով նորա՝ ըստ Մակար վարդապետ Բարխուդարեանի անուանագրութեան՝ են Ճըռ, կեղծ տեղապահ, իբրև երբեմն ի հեգնական տեսութեան, և Սաուդ ընդ մարդարէս»։

2) Հարկաւոր է յիշել, որ Սինօդի անդամ Գեր. Սարգիս եպիսկոպոսը անխտիր հետեոյ չէ եղել միւս անդամներին. այլ մի քանի անկանոն վճիռներից անմասն է մնացել։

ինչ օրագիր կամենում էին՝ կազմում էին և ստորագրում և ապա ուղարկում Տեղակալին ստորագրելու, և եթե վերջինս վերադարձնում էր իբրև անկանոն և անհաւանելի, հետևաբար չէր արձակում և պ. Պրօկուրորը, նոքա մի ուրիշ նոյնպէս անկանոն օրագրով կատարում էին տալիս նախընթացին. կամ թէ այս և այն մասից սովորաբար արձակում էր հրաման, երկու և մինչև անգամ մի անգամի գիտութեամբ: Որովհետև «Արարատի» մէջ արդէն հետզհետէ յառաջ են բերւում այդպիսի օրագիրներ, ուստի և աւելորդ կրրկնութիւն չանելու համար բաւականանում ենք յիշատակել մի քանի օրինակներ կառավարչական մասից:

1. Օգոստոսի 8-ին առաջագրութիւնով ուղարկւում է նամակու կոնսիստորիային Բագու քաղաքի գերեզմանատան եկեղեցու շինութեան ծրագիրը. ստորագրել է Սուքիաս եպիսկոպոս:

2. Օգոստոսի 23-ին առաջագրւում է Տաթևի հոգևոր կառավարութեան՝ Մարտիրոս քահանայ Տէր-Մովսիսեանին փոխադրել Հանգամէջ գիւղը, այնտեղ քահանայադործելու պաշտօնով: Ստորագր. Սուքիաս և Ներսէս եպիսկոպոսներ:

3. Սեպտեմբ. 30-ին առաջագրութիւն է լինում Աստրախանի կոնսիստորիային. ստոր. Սուքիաս եպիսկոպոս:

4. Սեպտեմբ. 9-ին առաջագրւում է Կարսի հոգևոր կառավարութեան յայտնել Սինօզին թէ Յակովբ քահանան որպիսի պատճառով թողել է Դոլբանդ գիւղն և գնացել Սոգիւթլու: Ստորագրել է միայն Սուքիաս եպիսկոպոս: Այդ հրամանը ուղարկելուց յետոյ նոյն օրը դարձեալ և նոյն եպիսկոպոսի միայնակ ստորագրութիւնով սեւագրի վերայ գնում է մի այլ հրաման Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարութեան վերայ, յիշեալ քահանային թողնել Սոգիւթլու գիւղում մնալու և քահանայադործելու: Գործից երևում է, որ քահանան այդ օրուայ թուով մի խնդիր է տուել Սինօզին՝ անձամբ եկած լինելով, որով կարելի է եզրակացնել, թէ քահանան հասել է այն ժամանակ, երբ առաջին հրամանը փոստին է յանձնուած եղել: Այլ ևս չենք կամենում Սինօզի միւս մասերին մօտենալ: Սինօզի անունով ամեն տեսակ գեղծումն և կամայականութիւն գործ զնելու յանդգնութիւնն այն աստիճանին էր

Հասել, որ մինչև անգամ Արարատի Յունիսի ամաստեորակի պաշտօնական բաժնում Քաղուածք յօրագրութեանց Աինօղի վերնագրով գետեղուեց Գեր. Սուքիաս եպիսկոպոսի մի յօդուածը Վեհաբանի գոյից յափշտակութեան մասին, առանց գիտութեան այն իշխանութեան: Ա. Տեղակալի, որը Վաթոյիկոսի մահից յետոյ միակ վերահսկողն և պատասխանատուն է ճանաչուած Արարատի Հրատարակութեան Համար: Իսկ երբ որ Տ. Տեղակալը իմանալով այդ՝ Հրամայեց Հանել ամագրի միջից յիշեալ յօդուածն և իրան ներկայացնել, երկու Հարիւր օրինակ արդէն յափշտակուած և նամակների Հետ բաժանուած էին զանազան քաղաքներ: Մի կողմը թողած յանցանքին մասնակցողների պատասխանատուութեան ծանրութիւնը ⁽¹⁾ Հարկաւ որ ենք Համարում Համառօտապէս յառաջ բերել յիշեալ յօդուածի բովանդակութիւնը, որ երեք գլխաւոր կէտերում է ամփոփուում:

1. Թէ՛ Աինօղի Սրբազան Ատենակալները «զուշացած էին Վեհաբանում գտնուած Աթոռապատկան կահկարասեաց, Նորին Սրբութեան սեպհական գոյից և պաշտօնական թղթոց»:

2. Թէ՛ Վեհաբանի դռները բանալու և ցուցակագրելու առաջին իսկ օրն իւր զարմանքն բանիւ յայտնում է Գեր. Սուքիաս եպիսկոպոսն անդամակցաց՝ Վեհ. Վաթոյիկոսի արկղումն ակնկալութեան Հակառակ աննշան գումար գտնուելու մասին և ապա ստիպում է Յակովբ Արակոսեանին յայտնել իսկութիւնն:

Նա առանձինն խոստովանում է թէ՛ իւր ձեռքումն գտնում է տասն և մի Հազար ռուբլի արժեւորմանը: Այս յայտնագործութիւնից յետոյ Սրբազան Սուքիաս եպիսկոպոսն Հրաւիրում է Նորան բերել այդ գումարն և յանձնել վանքին, երբ նա յանձն չէ առնում այն Ժամանակ, ապրիլի 25-ին ծանուցագրով Հասուցանում է ի տեղեկութիւն Սրբազան Աինօղի:

(1) Գերապատիւ Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանը մի յայտարարութիւն ունի այդ մասին տուած իրրեւ բացատրութիւն: Արովհետեւ յայտարարութիւնը գեա պատշաճաւոր քննութեան և անօրէնութեան չէ ենթարկուել, չենք կարող յառաջ բերել այստեղ, և թողնում ենք ժամանակին:

3. Թէ՛ ինչպէս ստուգութիւնից յայտնուամէ՛, վանքապատկան իրեղէնք՝ որոնք գտնուում էին Վեհաբանումն գործադրութեան Համար, ամբողջովին պաշտպանուած են, բացառութեամբ քանի՛ մը աքժախէղէն սահաւաթէ՛, առջինէն ի, կորուստն վերաբերում է Հանգուցեալ Հայրապետի դրամոց, անկար կերպաս, ասուի և բամբակի կտորեղինաց, զանազան արծաթի կահուց, բաժակների, ամսենների, ընշատութիւնի, մատանիների, բաժակակալների, մուշտակի և այլն:

Արչափ մեզ Համար անհասկանալի է այդ կրկնակի յանցանք գործելու նպատակը, նոյնքան ևս անհասկանալի են մի քանի Հակասութիւններ և մթութիւններ, որոնք եթէ սովորական կարող են լինել դատաստանական քննութիւնների ենթարկուած յանցաւորների կամ նորանց վկանների ցուցմունքների մէջ, գոնէ ամենեւին տեղիք պիտի չունենային «պաշտօնական» անունը կրող բացատրութեան մէջ:

Այսպէս օրինակ՝ առաջին. եթէ Սինօդականք զգուշացած էին Վեհաբանում գտնուած աթոռապատկան կահկարասեաց և Հանգուցեալ Վաթոյիկոսի սեպհական գոյից և պաշտօնական թղթոց մասին, ապա ի՞նչպէս պատահեց, որ այդ զգուշութիւնից յետոյ դարձեալ գողութիւնը կատարուեց, երկրորդ. որ օրում և որպիսի Սինօդական օրագրով ստուգուեց և երևաց, թէ Վեհաբանում գործադրութեան գտնուած վանքապատկան իրեղէնք ամբողջովին պաշտպանուած են, բացառութեամբ մի քանի արծաթեղէն սակաւարժէք անօթների ¹⁾ և բրբ քննուեց և յայտնուեց, թէ Հինգ վեց տարուայ ընթացքում ո՛րքան նոր արծաթեղէններ են գնուել Վե-

(1) Զարմանալի է, որ մի ժամանակ «Առաքարչապատից» նոյն Յունիսի 30-ին «Արեւելքին» (16 Յուլիսի 1891) ուղղած մի թղթակցութիւն ասում էր. «Այստեղ տարածեցին և լրագրութեան մէջ մինչև անգամ ակնարկեցին թէ վեհաբանն էլ կողոպտուած է: Այլ ինչ որ Աջմիածնի սեպհականութիւնն է, որ Վեհաբանումն է գտնուում: ոչինչ չէ կորած (տեսնում էք, այստեղ բացառութիւն չը կայ արծաթեղէն սակաւարժէք անօթների մասին): այլ միայն Վաթոյիկոսի սեպհական կայից կորուստ կայ»:

Հարանի անունով, որքան հետզհետե գանձարանից են հանուել և Վեհարանին յանձնուել, օրինակ՝ բաժակներ, ափսէներ, ժամացոյցներ, մատանիներ և այլ իրեղէններ, որից յետոյ միայն կարելի էր ասել, թէ ինչ որ Էջմիածնի սեպհականութիւնն է, ամբողջովին պահպանուած է. կամ թէ՛ կայ մէջտեղում մի ցուցակ, մի գործ, որից երևի, թէ հանգուցեալ Վաթոյիկոսը Քիչնէից եկած ժամանակ հետը բերել է այս և այն իրեղէնները:

Այսպիսի մի ցուցակ չը կայ, և եթէ լինէր անգամ՝ դարձեալ իրաւունք չէր տալ ոչ ոքի գողացուած իրերը Վաթոյիկոսի սեպհականութիւն անուանել: Եթէ մի Հայրապետի տարեկան 20 հազարից աւելի ծախսերը կարող է հոգալ Էջմիածինը, եթէ նորա «մասնաւոր ծախուց» համար Մայր Աթոռի գանձարանը պարտաւոր է տարեկան չորս հազար ուսուրի փող տալ, միթէ այդ Հայրապետի ունեցածը մասնաւոր սեպհական կայք համարելու է: Վերջապէս՝ մի ըոպէ ենթադրենք, թէ Վաթոյիկոսը կարող է սեպհական գանձ, սեպհական կայք ունենալ. և թէ՛ գողացուածներն այդ վերջին տեսակից են. — Վաթոյիկոսինն են և ոչ Էջմիածինը. դորա համար կեղծ պաշտօնական քաղուածների, բացատրութիւնների հարկ կ'ըն առնէ՞, քանի որ գործը քննող դատարանի վրձնին է մնում պարզել թէ Վեհարանի գողերի յանցանքը եկեղեցական թէ մասնաւոր գոյքի յափշտակութիւն է:

Երբորդ, չենք հարցնում, թէ ո՞ր անգամակիցներին է յայտնել Վեր. Սուքիաս եպիսկոպոսն իւր զարմանքը Վեհարանի կայքը ցուցակագրելու առաջին օրը, չը նայելով, որ անգամների երիցագոյնը, Սինօղի ատենապետի և վանքի անմիջական վանահօր Տեղա. կալը ներկայ լինելով հանդերձ՝ այդպիսի զարմանք չէ լսել. կը կամենայինք իմանալ, թէ նորին Պերապատուութիւնը իբրեւ տեղեակ հանգուցեալ Վաթոյիկոսի կարողութեան — իբրեւ «զէթ երեսուն հազար ուսուրի տեսնելու ակնկալող»՝ իրաւունք ունէ՞ր մի ամբողջ օր ուշացնելու իւր յայտարարութիւնը պատահած գողութեան մասին, քանի որ այդպիսի ղեպքում մի օրը մեծ նշանակութիւն ունի: Իսկ թէ նա դարձեալ յայտարարութիւն կը ներկայացնէ՞ր Սինօղին 3) հազար ուսուրու մնացած կորուստի մա-

սին, եթէ Հաճի Յակովբը նորա «Հրաւերն» ընդունէր և 11000 ռուբլին յանձնէր վանքին — յօդուածում ոչինչ չէ ասուած:

Ե.

«Եթէ բարոյական և եկեղեցու կանոնական կէտերը թողած Վեր. Պարզեանցի գործը պետութեան օրէնքների կէտիցը քննելու լինինք, այն ժամանակ ևս այս գործը մեզ դատապարտելի կը հանդիսանայ, որովհետեւ ոչ մի բարեկարգ տէրութիւն թոյլ տալ կարող չէ, որ իւր օրինաց պաշտպանութեան ներքոյ գտնուած եկեղեցու պէս վսեմ նպատակ ունեցող հաստատութիւնը վնասուի և անպատիւ լինի անհարազատ կամ անհնազանդ պաշտօնեաների ըմբոստութիւնից» «Փորձ», 1877/78, № 2, եր. 378. 1877 թուին փոքր էր մնացել, որ Վեր. Սուքիաս եպիսկոպոսի սենեակը ոստիկաններ շրջապատէին: Եւ այդ որոշումն արել էր Սինօղը, որ ամենայն Հայոց Հայրապետի, հանգուցեալ Վեորգ Վ. ի հաճութեամբ նոյն թուի Մայիսի 9-ին (ՆՁ 1215) դրում էր Երևանի պ. նահանգապետին. «Սինօղս ի պատիւ անհնազանդութեան Սուքիաս եպիսկոպոսի Պարզեանց պատուիրանաց վեհափառ Կաթողիկոսի, և Հրամանադրութեանց Սինօղի սահմանեաց առաքել զնա օրագրական եզրակացութեամբ իւրով՝ կայացելով ի 29 Ապրիլի տարւոյս, ի վանս Վեղարդայ յառժամանակեայ միաբանակցութիւն. բայց նա դրաւոր եղանակաւ ընդդիմանայ կարգադրութեանց իւրում Գայրագոյն Հոգեւոր Իշխանութեան ի չար օրինակ այլոց, ուստի եզրակացոյց՝ ըստ որում Սուքիաս եպիսկոպոս ի բաց թողեալ զպարտաւորութիւն հնազանդութեան իւրոյ, յայտնապէս ըմբոստացեալ հակառակի անօրէնութեանց Սինօղիս և չառնու յանձն երթալոյ ի միաբանակցութիւն Վեղարդայ վանից, վասնորոյ առ ի կատար ածելոյ Սինօղիս զիւրն եզրակացութիւն ի մասին առաքման յիշեալ եպիսկոպոսի ի նշանակեալ տեղին խնդրել Ձերդ Վերազանցութենէ... Զվերոյգրելոցն ծանօթս տուեալ Վերազանցութեան Ձերում Սինօղն Սրբոյ Էջմիածնի յարգոյաբար խնդրէ ի Ձէնջ շնորհ առնել ի գտանել ի Ձերդ կողմանէ զհնարս առաքելոյ զյիշեալ Սուքիաս եպիսկո-

պոսն ի վանս Գեղարդայ և գորոշմանէ Զերմէ այսր մասին պատուել զՍինօղն ի փոյթ միջոցի ծանօթութեամբ»:

Այս գրութիւնը Ս. Սինօղն ստիպուած էր ուղղելու պ. Նահանգապետին իբրև կատարումն նոյն թուի Ապրիլի 29-ի կայացած օրագրի, որ ասում է. «ԸՍՏ ՀՐԱՄԱՆԻ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՅ, ի Սինօղիս լուան գերկոսին յայտարարութիւնս Սուքիաս եպիսկոպոսի Պարզեանց ի 18 այսր Ապրիլի Համարօք 49 և 50, յորոց առաջինն յանուն Նորին Վեհափառութեան Կաթողիկոսի Ամենայն Հայոց մակագրութեամբ յանձնեալ Սինօղիս առ ի տնօրինել զարժանն Համաձայն եկեղեցական կանոնաց յորում գրի, թէ «ի 17 ամսոյս Տէր-Տեղակալ Ատենապետիդ ի Սրբազան Սինօղի Սրբոյ Էջմիածնի Գերապատիւ Մկրտիչ Արք-եպիսկոպոսն Բաբամեանց, յետ առաւօտեան ժամերգութեան՝ կոչեալ զիս առ ինքն ի դիմաց Վեհափառութեանդ ծանոյց. «չնդառաջել Զեզ ի դուռն Վեհարանի և յատեան եկեղեցոյն յերթեակսն Զեր ի սուրբ տաճարն՝ մինչդեռ չեմ ներկայացեալ Տէրութեանդ». ինձ աւագ լուսարար վանուցս՝ Գերապատիւ Երեմիա Սրբազան եպիսկոպոսն, յիջանելս ի սուրբ պատարագ՝ տարեալ ի պահարանն պատմեաց թէ. «Վեհափառ Կաթողիկոսն պատուիրեաց յայսմՀետէ և յառաջ չարկանել զանձամբ զշուրջառ և չելանել յատեան, ըստ որում տակաւին չեմ ներկայացեալ Զեզ»: Վեհափառ Հայրապետ, որովհետեւ ի 27 անցեալ Մարտի՝ յաւուր գատիկ Կիւրակէի յարութեանն Յիսուսի, յետ առաւօտեան ժամերգութեան հրաւիրեալ զբարեշնորհ Գէորգ վարդապետ Աբամէլիքեանց՝ զհիւրընկալ Սրբոյ Աթոռոյս, առաքեցի առ Տէրութիւնդ յայտնել զյօժարութիւնս վասն ներկայանալոյ Զեզ և ընկալեալ զթոյլտուութիւն մատենա ի Համբոյր աջոյդ ընդ միաբան եղբարց. ուստի ըստ ինձ ծանօթ կարգին՝ յատուկ եղելոյ ի միաբանութեան, անհրաժեշտ պարտք անձին Համարեցի ի պատիւ և ի շուք Հայրապետական կոչման ընդառաջել Զեզ յերթեակսն յեկեղեցի. այլ զի Զերդ Սրբութիւն՝ իբրու անձն կրող Կաթողիկոսական Իշխանութեան, չբարեհաճի ընկալնուլ զխոնարհ յարգանս առ աստիճան Քահանայապետութեան Հայոց, ամենայն հնազանդութեամբ յարգեմ զպա-

տուէր Տեառնդ՝ չընդառաջելով Ձեզ յելս և ի մուտս ի տուն աղօթից Տեառն, գայդպիսի մեծարանս պահել ի սրտի: Սակայն ի մասին չարկանելոյ զանձամբ զշուրջառ և չելանելոյ յատեան չկարեմ պատուել զհրաման Ձեր. վասն զի երբ հոգևորականք իւրաքանչիւր աստիճանի առանձինն եկեղեցական յատկանիշ ազանելեօք և հանդիսական կարգօք զփառաբանութիւնս մատուցանեն Աստուծոյ, այն ամենայն վերաբերի Տէրունական, Սրբոց կամ Կայսերական տօնից և ոչ Ձերդ Սրբութեան, յորում իրաւունք համարէիք առնել զկարգադրութիւն առանց օրինաւոր եկեղեցական և քաղաքական օրինօք ապացուցանելոյ զյանցաւորութիւնս. մանաւանդ զի չիք իմ բնաւ տեսեալ ընդ հրամանաւ իշխանաւորի կնքել փառատրութիւն Ամենաբարձրելոյն: Ուստի որպէս ի 17 ամսոյս ի պատիւ տօնի ծննդեան Օգոստափառ Կայսեր Ռուսիոյ Աղէքսանդր Նիկոլայեվիչի և Սեծ Իշխան Կայսերազն Նիկոլայ Միխայէլովիչի արկեալ զանձամբ զշուրջառ ի ցոյց հպատակութեանս պարտուց և հաւատարմութեան՝ յաւարտ սրբոյ պատարագի ներկայ գտայ գոհացողական մաղթանաց, և յերեկոյին հանդիսաւոր օրհնաբանութեան Յարուցելոյն՝ յանդաստանի, նոյնպէս յայսմհետէ և յառաջ ունիմ ի սրտի զեռանդն և զփափագ յարգել զեկեղեցական և զքաղաքական տօնս ըստ հասարակեալ կարգին պատուեալ ի Հայաստանեայց Առաքելական ուրբ եկեղեցւոյ: Զվերոյգրելոցն հաղորդեալ ի գիտութիւն Վեհափառութեանդ՝ շնորհ ունիմ ամենախոնարհաբար ծանուցանել, զի զհարազատ օրինակ սորին մատուցի Սրբազան Սինօդի Սրբոյ Էջմիածնի, առաքեցի և խմբագրութեանցն Արարատ և «Հայկական Աշխարհ» կրօնական ամսագրոց, «Մեղու Հայաստանի», «Մշակ», «Տփլիսական Համբաւաբեր» լրագրոց և «Փորձ» եռամսեայ հանդիսի վասն հրատարակելոյ զայն և իրաւաբանական սկզբամբք ապացուցանելոյ զարդար իրաւունս մեծի Հրամանատուիդ և փոքու ըմբոստացողիս: Եւ երկրորդ՝ ըստ որում մատուցանէ Սուքիաս եպիսկոպոս Սինօդիս զհարազատ օրինակ վերոյիշեալ յայտարարութեան յանուն Վեհափառ Հայրապետի ի նոյն թիւ ամսոյ, խնդրէ առնել զայն ի նկատի, և ի դէպս կարեւորս համեմատել զվարմունտ Մեծի Հայրապետի ընդ սկզբանց կանոնաց սահմանադրական եկե-

ղեցւոյ, Հայաստանեայց եկեղեցւոյ և ընդ Կայսերական օրինաց, որովք պարտի վարիլ ամենայն իշխանութիւն ի Ռուսիա: Տե՛ղեկովութիւն, ի գործոց Սինօդիս երևի, Ա. զի ըստ բանաւոր Հրամանի վեհափառ Կաթողիկոսի Սինօդս ի Դատաստանական մասնէ իւրմէ ի 22 ամսոյս Պօ 959 պատուիրեաց Սուբիաս եպիսկոպոսի չիջանել յեկեղեցի, չարկանել զանձամբ զփիլոն և զշուրջառ ցվճռահատութիւն գործոյն: Եւ երկրորդ՝ առ այս Սուբիաս եպիսկոպոս յայտարարութեամբ 22 Ապրիլի Պօ 59 գրէ առ Սինօդն, առ Հաղորդագրութիւն Դատաստանական մասին Սինօդիդ ի սոյն թիւ ամսոյ Պօ 959, շնորհունիմ պատասխանել. «Յամենայն դէպս և յամենայն ժամանակի արդար Հրաման վեհափառ Հայրապետի ազգիս՝ Տեառն Գէորգայ սուրբ է վասն իմ. այլ զի չիջանել յեկեղեցի և չարկանել զանձամբ զփիլոն և զշուրջառ ցվճռատութիւն գործոյն, է պատիժ, և այդ չկարէ յառաջել նախքան ցվճռահատութիւն որոյ և իցէ գործոյ, ուստի խոնարհ յարգանօք ծանուցանեմ թէ՛ չը կարեմ յարգել զայդպիսի Հրաման, մանաւանդ զի ատենդ Հրամանագրութեամբ ի 21 ամսոյս Թուահամարաւ 949, առժամանակեայ դադար տուեալ քննողական գործոյն՝ արձակեաց զիս ի պաշտօնէ փոխանորդութեան վիճակին Աղէքսանդրապօլու և կարճեաց զոռճկադրամ առանց յանցաւոր զիս համարելոյ, արձակեաց յանդամութենէ զՎոստանեանցն և զորս ընդ նմա, տալով նոցա իրաւունս քահանայագործութեան, ուրեմն հաճեսցի Սրբազան Սինօդդ շատանալ և բաւարարել զվեհափառ Կաթողիկոսն ազգիս երկոքին պատժովքն և անարգ քան զքահանայս չգրել զիս: Ո՛չ աւելորդ համարիմ ծանուցանել ամենախոնարհաբար, զի դոյնն յայսմ հետէ և յառաջ որոշեսցէ պատուել զիս որ և է Հրամանաւ ըստ դիւանատան կարգի ստացելոյ յօրագրական եզրակացութենէ և ո՛չ մանաւորապէս՝ որոց թերեւս դժուարացայց պատասխանել: Ո՛չ անտեսեսցէ Սրբազան Սինօդդ և Մայրագոյն Պատրիարք Կաթողիկոսն զի տրամադրութիւն հոգւոյ Հայաստանեայցս առաքելական եկեղեցւոյ է՝ զյանցաւորսն ապաշխարեցուցանել յեկեղեցւոջ և առ դրան նորին, ածանցեալ է այս գեղեցիկ օրինակ և առ օրէնս քաղաքականս: Ապա եթէ զիս յանցաւոր ճանաչելով հանդերձ՝ վեհափառ Կաթողիկոսն արգելու յիջանե-

լոյ յեկեղեցի՝ ուր այլ ուրեք պարտիմ ապաշխարել: Ի լսելն զայս Տէր-Տեղապահ վեհափառ Կաթողիկոսի Անդամ Սինոդի Վերապատիւ Մկրտիչ Արքեպիսկոպոսի յաւելումն բանից յիշելոց ի Սուքիաս եպիսկոպոսէ յիւրումն անդ յայտարարութեան, յայտնեաց նախ՝ այսպէս. «Երբ Նորին վեհափառութեան Հրամանը յայտնեցի նոյն եպիսկոպոսին, պատասխանեաց նա, թէ «ես գոհ եմ Նորին վեհափառութենէն որ զիս ազատ կացոյց յընդառաջ ելանելոյ յերթեակն Նորա ի սուրբ տաճարն յայնմ ցած պաշտօնէ» կրկնելով երիցս անգամ զայսոսիկ բանս, երկրորդ՝ ասաց նոյն եպիսկոպոսն «ես իջանելոց եմ յեկեղեցի, առնելոց եմ զինեւ զշուրջառ, ընթեռնելոց եմ զգիրս և զԱւետարանս եթէ յայսմ մասին վեհափառ Կաթողիկոսն ինձ մի անպատիւ բան ասէ Հինգը կը պատասխանեմ: ՀՐԱՄԱՆ-ՅԵՅՅԻՆ. Որովհետեւ ի գրագրութեանց, որ ի վերոյ, յայտնապէս տեսանի, զի Սուքիաս եպիսկոպոսն Հակառակ սովորութեան միաբանական կարգի ըմբոստացեալ ընդդիմանայ որպէս պատուիրանաց վեհափառ Կաթողիկոսի նոյնպէս և Հրամանագրութեան Սինոդիս Հակառակասիրութեան Հոգւով առ ի չիջանելոյ յեկեղեցի և չարկանելոյ զանձամբ զշուրջառ և չընդառաջելոյ Նորին Սրբութեան ընդ եպիսկոպոսունց յերթեակն Նորա յեկեղեցի. վասնորոյ ըստ նախընթաց Հաճութեան Նորին վեհափառութեան Սինոդս սահմանեաց առաքել զՍուքիաս եպիսկոպոս ի վանս Գեղարդայ ի միաբանակցութիւն առ ի կալ և մնալ անդանօր առ ժամանակ մինչ ցաւարտումն սոյն գործոյ, զորմէ Հրամանաւ պատուիրել Սուքիաս եպիսկոպոսի ընդ ստանալ Հրամանագրութեան փութալ երթալ ի նշանակեալ տեղին առանց ժամավաճառ լինելոյ ազդելով նմա, զի ի դէպս այլ ևս ընդդիմութեան Հրամանաց վեհափառ Հայրապետի ազգիս, ունի Սինոդս վարիլ ընդ նմա այլ իմն եղանակաւ: Իսկ ակնարկութիւն Սուքիաս եպիսկոպոսի ի գրուածս իւր ի գործ քննութեան Աղէքսանդրապօլս ոչ վերաբերի յայս գործ ընդդիմութեան Նորա իրաւանց և պատուիրանաց վեհափառ Հայրապետի, և է իսպառ աւելորդ, վասն զի Սինոդս այժմ սահմանէ նմա միայն զպատիժ վասն անհնազանդութեան Նորա և ընդդիմութեան Հոգեւոր Ծայրագոյն Իշխանութեան: Իսկ վանահօր յիշեալ վանուցն տալով տեղեկութիւն զնշա-

նակմանէ Սուքիաս եպիսկոպոսի յառժամանակեայ միաբանակցութիւն, պատուիրել հրամանաւ ընդունել զՍուքիաս եպիսկոպոսն՝ հոգալով զամենայն կարեւոր պիտոյս ի վանուց անտի ցտնօրէնութիւն Սինօդիս»:

Վարդանանց տօնի տւթիւ ձեմարանի մեղ հալորդում են հետեւեալը.

Ինչպէս ամեն տարի, այս տարի էլ ձեմարանը տօնեց ս. Վարդանանց անմոռաց յիշատակը:

Փետր. 13-ին երեկոյեան ձեմարանի դահլիճում տեղի ունեցաւ հանգէս. ներկայ էին ս. Էջմիածնի միաբաններից շատերը, ձեմարանի ուսուցիչները և կողմնակի հանդիսականներ: Հանգէսը բացուեց «նորահրաշ» շարականով: Այնուհետեւ կարգացին ճառեր, հատուածներ Եղիշէից և ոտանաւորներ մեր նորագոյն բանաստեղծներից: ձեմարանի նուագախումբը և երգեցիկ խումբը փոփոխաբար նուագում էին և երգում:

Այդ օրը նորութիւն և հետաքրքրութիւն էր ներկայացնում ձեմարանի տեսչի օգնական Պ. Յ. Սաղաթելեանի ճառը, որ տպագրւում է «Երաբատի» ներկայ համարում: Ե. դարի կրօնական պատերազմը մեր պատմական կեանքի ամենանշանաւոր վայրկեաններից մէկն է, որի մասին մինչև այժմ շատ են խօսել, այնքան շատ, որ, կարելի է ասել, նրա մասին արդէն կազմուել է մի բանաձև, որն այսպէս կամ այնպէս կրկնւում է: Պ. Յ. Սաղաթելեանը իւր այս ճառում փորձում է այդ մեծ պատմական իրողութիւնը աւելի լուսարանել նոր հայեցակէտներով:

ՀԱՅԵՐԻ ԵՒ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՄԷՋ ԿՐՕՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՒ ՆՈՅԱ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՏՐՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ ԵՐԿՈՒ

ԱԶԳԵՐԻ ԱՊԱԳԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԷ:

Վարդանանց անունը կրող պատերազմը մէկն էր այն պատմական մեծ իրողութեան հետեւանքների արտայայտութիւններից, որը տեղի ունեցաւ հայ ազգի իւր նախնական կրօնքը փոխելուց: Քրիստոնէութիւնը երբ մօտաւ Հայաստան նա ջնջեց և փոխարինեց հայ ժողովրդի մէջ նորա բոլոր գաղափարները, որոնք նա ունէր նախախնամութեան և մարդու կոչման մասին, բայց որոնք Պարսկաստանում մնացին հաստատուն պահելով իրենց նուիրական նշանակութիւնը: Ար պարսիկ ժողովրդի և նորա ցեղակից հայազգի կուլտուրան, կրօնական հիմնական աշխարհահայեացքները և դիցաբանու-